Արձանագրություն N 4

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Հ-1 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

« 19» 12. 2025թ. Ժամը 12:00

Մասնակցում էին՝

- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության պետ Գ. Մկրտչյան (հանձնաժողովի նախագահ),
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի պետ Ա. Հովհաննիսյան (գնահատող անդամ),
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Տ. Հարությունյան (գնահատող անդամ),
- Գնումներ համակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ասատրյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **ջեռուցման համակարգի կառուցման** աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Հ-1 ընթացակարգի հանձնաժողովի նախագահ Գ. Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված:

1. Տվյալներ հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին.

Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել էին մասնակիցների ներկայացրած հայտերը: ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Հ-1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստը կասեցվել էր 1 աշխատանքային օրով և առաջարկվել էր *Հյուր Կոնստրուկտոր ՍՊԸ-ին, Մարկուս ՍՊԸ-ին, ԱՐԵԳ ՇԻՆ ՍՊԸ և Պիրամիդա շին գրուպ ՍՊԸ կոնսորցիումին, ՎՈԼՏ ԱՄՊԵՐ ՍՊԸ-ին 1* աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով պահանջվող **«Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների» և «Ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր)» բնագավառների լիցենզիաները և ներդիրները: Առաջարկել** *Էդինգ ՍՊԸ և Այպոշին ՍՊԸ կոնսորցիումին ներկայացնել* **«Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների» բնագավառի լիցենզիայի ներդիրը,** *Վանռուբին ՍՊԸ*-ին ներկայացնել **հավելված 1.1-ը՝** հավաստումը, ***ՄարկՇին ՍՊԸ-ին ներկայացնել*** **«Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների» բնագավառի լիցենզիայի ներդիրը** իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի ակտիվ հղում, դիմում հայտարարություն՝ հավելված 1-ը, նշելով չափաբաժինների համարները, որոնց համար ներկայացվել է հայտ: Շտկումները կարատվել են ժամանակին և գնահատվում են բավարար:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Հ-1 ծածկագրով գնման ընթացակարգի 2րջանակում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվում ՖՏԴ-ՇԻՆ ՍՊԸ-ն, 2-4 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվում ՎՈԼՏ ԱՄՊԵՐ ՍՊԸ-Ն:

Քանի որ Այպոշին ՍՊԸ-ն Էդինգ ՍՊԸ-ի հետ առանձին և Շին Կոմպլեքս Գրուպ ՍՊԸ-ի հետ առանձին կոնսորցիումներով տվյալ գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնին միևնույն ժամանակ մասնակցել է տվյալ գնման ընթացակարգին, ուստի ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Հ-1 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին մասի 2.6-րդ կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 32-րդ կետի 7-րդ ենթակետի բ. պարբերության պահանջների համաձայն հրավերով սահմանվում է, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը, ուստի Այպոշին ՍՊԸ-ի, Էդինգ ՍՊԸ-ի, Շին Կոմպլեքս Գրուպ ՍՊԸ-ի հայտերը մերժվում են: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն, միջոցներ կձեռնարկվեն Այպոշին ՍՊԸ-ին, Էդինգ ՍՊԸ-ին, Շին Կոմպլեքս Գրուպ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ: Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին կառաջարկվի կնքել պայմանագիր:

Հանձնաժողովը որոշեց՝

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մկրտչյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Հովհաննիսյան

Տ. Հարությունյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան